ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՐԻԲՅԱՆ ԱԼԻՆԱ ԱՄԲԻԿԻ

ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

Ժ.01. 05- «Բանահյուսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում։

Գիտական ղեկավար՝ **Հայրապետյան Թամար Լազարի**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Ջիվանյան Ալվարդ Հակոբի**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Ղռեջյան Լուսինե Խաչատուրի
բանասիրական գիտությունների
թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունիսի 12-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲԿԳԿ- 003 մասնագիտական խորհրդում ։
Հասցեն՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2026 թ. մայիսի 11-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ Ս.Ա.Մարգարյան
բան. գիտ.թեկնածու

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ չնայած գրեթե մեկուկես հարյուրամյակ հետազոտվում են «Սասնա ծռեր» էպոսի հերոսների կերպարները, և այդ համատեքստում անդրադարձ է կատարվում նաև կին հերոսներին, սակայն մինչ այժմ կանանց կերպարների ուսումնասիրությունը անհրաժեշտ ծավալով ու խորությամբ չի կատարվել: Տարբեր գիտակարգերի արդի մեթոդաբանությունը թույլ է տալիս ոչ միայն կանանց կերպարները քննության առնել առկա հարուստ նյութի շրջանակներում, այլ նաև այդ քննությունը ծառայեցնել գլխավոր հերոսների կերպարների վերլուծությանն ու մեկնաբանությանը, այդ ամենը դիտարկել կանանց կերպարների տեսանկյունով, կանանց՝ որպես հզոր Մայր և Կույս դիցուհիների գործառույթների լույսի ներքո:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության նպատակն է՝ վեր հանել «Սասնա ծռեր» դյուցազնավեպի կանանց կերպարների հիմնական բնութագրերը՝ իբրև հզոր դյուցազնուհիների, որոնք իրենց մեջ ամփոփում են հազարամյակների արխաիկ ու հերոսական պատկերացումների շերտերը, ինչպես նաև բացահայտել կանանց դերն ու նշանակությունը Սասնա հերոսների կյանքում՝ որպես նրանց լրացնող, ամբողջացնող, քաջագործությունների մղող հերոսուհիներ: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. վեր հանել կանանց կերպարների պատմական և առասպելաբանական ակունքները, հերոսների և հերոսականության հետ առնչվող նմանություններն ու գործառույթները, կերպարների աստիճանական զարգացումները, տիպաբանական ընդհանրություններն ու առանձնահատկությունները, հնագույն շերտերը,
2. Բացահայտել ինչպես «Սասնա ծռեր» վեպի դյուցազնուհիների, այնպես էլ այլ էպոսների կանանց կերպարների հնագույն շերտերը զուգադիր համեմատությունների միջոցով:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են հանդիսացել Գարեգին Սրվանձտյանցից հետո բանահավաքների կողմից վեպի՝ Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններից տարբեր ժամանակներում գրառված և ըստ տիպաբանական խմբերի ամբողջացված ու առանձին հատորներով կամ գրքերով հրապարակված ինքնուրույն պատումները, ինչպես նաև հայ մատենագրության մեջ վկայված հին ու նոր վեպերը՝ հնագույն առասպելներ, «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», այլ ժողովուրդների էպոսներ:

Էպոսի ուսումնասիրության առաջին փորձերից սկսած՝ հետազոտողները անդրադարձել են նաև կանանց կերպարներին: Հատկապես հիշատակելի են Մանուկ Աբեղյանի մի շարք աշխատություններ («Ազգային վեպ», «Հայ ժողովրդական հավատք», «Հայ ժողովրդական վեպը», «Հայ վիպական

բանահյուսություն»), որոնցում գիտնականը անդրադառնում է վեպի կանանց կերպարներին և բացահայտում բնորոշ մի շարք կարևոր հատկանիշներ. մասնավորապես, հերոսուհիները վիպական կառուցվածքում դիտարկվում են նաև որպես հերոսներին լրացնող դյուցազնուհիներ: Աբեղյանը առաջին անգամ ներկայացնում է Ծովինարին կամ Ծովյանին որպես երկնային՝ փայլակի և կայծակի երևույթները մարմնավորող աստվածուհի[1], Դեղձուն Ծամին՝ որպես վիշապամարտի կին՝ Արև աղջիկ, որին Վիշապամարտիկ Սանասարը ազատում է՝ սպանելով վիշապին: Աբեղյանը ընդհանրություններ է արձանագրում Խանդութի և Տարունի միջև («Աղջիկ Տարունի» վեպից)[2]: Վեպի կանանց վիպաառասպելաբանական, պատմական հատկանիշներ են ներկայացված նաև 1951թ. հրատարակված «Սասնա ծռերի» պատումների Բ հատորի 2-րդ մասի արժեքավոր ծանոթագրություններում՝ կազմված Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից:

Էպոսի կանանց կերպարների խոր, համակողմանի վերլուծություններ է կատարել Հ. Օրբելին, որն այլ ժողովուրդների էպիկական ստեղծագործությունների և առասպելների հետ համեմատություններով վեր է հանել մեր վեպի կանանց բնորոշ վիպաառասպելաբանական նոր ենթաշերտեր:

Էպոսի ուսումնասիրման համար կարևոր է Ա. Սահակյանի 1975թ. հրապարակած «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն» մենագրությունը, որում վեպի հրապարակված քառասունյոթ պատումների քննությամբ վեր են հանված ոչ միայն հերոսներին, նաև կանանց կերպարներին բնորոշ առանձնահատկություններ՝ կապված ամուսնության, ժառանգի ծննդի հետ: 1996թ. Արուսյակ Սահակյանի և Ալինա Փահլևանյանի համահեղինակությամբ Փասադենայում հրատարակված «Սանա ծռեր դիւցազնավէպ. Առասպելական ընդերք, վիպական կառոյց, վիպասանական եղանակ» մեծարժեք աշխատանքում վեր են հանվում կանանց՝ որպես հզոր դիցուհիների կերպարների առասպելաբանական ենթաշերտերը. հատկապես նշանակալի պիտի համարել Ծովինարի, Խանդութի, Իսմիլի, նաև մյուս կանանց կերպարներին բնորոշ հատկանիշների՝ առասպելաբանական տեսանկյունով նորովի բացահայտումները:

Սարգիս Հարությունյանը իր ուսումնասիրություններում նույնպես անդրադառնում է կանանց կերպարներին, մասնավորապես՝ «Հայ առասպելաբանություն» աշխատության մեջ քննության է ենթարկում վեպում ուղղակի և անուղղակի դրսևորում ունեցող վիշապամարտի առասպելի ուրվագիծը և ինչպես Դեղձունի, այնպես էլ Խանդութի, Իսմիլի կերպարներում արտահայտված է տեսնում վիշապամարտի կնոջ կերպարը: Ծովինարի հետ համեմատությունների մեջ են դիտարկված երկվորյակների առասպելույթումհանդես եկող մոր հալածական կերպարը, նրա փախուստը՝

[1] Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Երևան, 1975, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 70-72:
[2] Աբեղյան Մ., հ. Ա, էջ 393-394:

միայնակ կամ որդիների հետ: Տարբեր ուսումնասիրողներ (Տիգրան Չիթունի, Վարդ Բդոյան, Ստեփան Ահյան, Արմեն Պետրոսյան, Սարգիս Պետրոսյան, Հասմիկ Իսրայելյան և այլք) կանանց կերպարներում (Դեղձուն Ծամ, Գոհար, Արտատեր պառավ, Խանդութ, Ծովինար) բացահայտել են նոր իրողություններ և ենթաշերտեր, որոնց մեր հետազոտության մեջ անդրադարձել ենք: Պետք է արձանագրել նաև, որ բանագիտական բոլոր հետազոտություններում, որոնցում ուսումնասիրության են ենթարկվել հեքիաթները, առասպելները, վիպերգերը, համեմատական հնդեվրոպաբանական առասպելաբանության յուրահատկությունները, պարտադիր անդրադարձներ են կատարվել «Սասնա ծռերին», այդ համատեքստում՝ նաև կանանց կերպարներին: Նման աշխատանքները նույնպես գիտական-տեսական հարուստ նյութ են ներկայացնում:

Ատենախոսության գիտական նորույթը: Գիտական շրջանառության մեջ է դրվում «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի հարյուր վաթսուն գրառված պատումներից ինչսունչորս տպագրված տարբերակներում Սասնա կանանց կերպարներին առնչվող մեծաքանակ նյութ, կատարվում է այդ կերպարների բազմակողմանի և համակարգված հետազոտություն էպոսագիտության և ընդհանրապես առասպելաբանության մեջ ընդունված միջազգային չափանիշներով՝ ելակետ ունենալով Մայր աստվածություններին բնորոշ առասպելաբանական և էթնիկական մի շարք առանձնահատկություններ: Կանանց կերպարները քննության են ենթարկվում մի քանի դիտանկյուններով: Դրանց շուրջ հյուսված դիպաշարերն ու մոտիվները օրինաչափորեն կայուն են և վեպի տիպաբանական երեք՝ Մոկսի, Մուշի, Սասունի խմբերում հանդես են բերում առանձնահատկություններ: Աշխատանքում համադրական եղանակով վեր են հանվում հայկական ժողովրդական վեպին, վիպապատմական բանահյուսությանը և հնագույն հեթանոսական պատկերացումներին ու աստվածուհիներին բնորոշ մի շարք ընդհանուր առասպելաբանական և ծիսական արխաիկ ենթաշերտեր, հերոսուհիներին բնորոշ տիպաբանական ընդհանրություններ, ինչպես նաև ազգային և էթնիկ առանձնահատկություններ:

Հետազոտության մեթոդները: Աշխատանքի բնույթով պայմանավորված՝ կիրառվել են արդի հայ բանագիտության մեջ ընդունված պատմահամեմատական, առասպելաբանական և կառուցվածքաբանական վերլուծության սկզբունքները: Հաշվի են առնվել մարդաբանական, հոգեվերլուծական դպրոցների փորձը,նեոմիֆոլոգիական ուղղության այսպես կոչված առասպելաբանական թևի (քեմբրիջյան դպրոց) ուսումնասիրությունների մեթոդաբանությունը (Ջ. Հարիսոն, Ռ. Գրեյվս): Կատարվել են բանահյուսական և ազգագրական նյութերի համադրական և համեմատական քննություններ: Կանանց կերպարների առումով վեպի պատումների՝ ըստ տիպաբանական խմբերի քննությունը նույնպես հետաքրքրական պատկեր է ներկայացնում՝ վեր հանելով դիպաշարերի ու մոտիվների կայուն օրինաչափություններ: Մյուս կողմից՝ առանձին պատումներում հանդիպում են մոտիվներ, որոնց

համեմատական և զուգադրական քննությունը հայ ժողովրդական հեքիաթների և այլ ժողովուրդների էպոսների հետ ի հայտ է բերում կանանց կերպարներում մոռացության մատնված հնագույն առասպելաբանական շերտեր ու պատկերացումներ:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել բանագիտության, առասպելաբանության, մշակութային մարդաբանության, մշակութաբանության, հոգեբանության, էթնոլեզվաբանության, ճանաչողական լեզվաբանության մասնագիտական դասընթացներում, հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար կարող են ծառայել որպես հատուկ դասընթացի նյութ, օգտակար կլինեն ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, մեթոդական ուղեցույցներ պատրաստելիս:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության առանցքային մի շարք հարցեր հոդվածների և զեկուցումների տեսքով ներկայացվել և տպագրվել են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի համար ընդունելի գիտական պարբերականներում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև Scopus միջազգային գիտական շտեմարանում ընդգրկված պարբերականում (հրապարակումների ցանկը տե՛ս սեղմագրի վերջում): Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեքստաբանության բաժնում և երաշխավորվել պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:Առաջին գլուխը՝ «Կանանց արխաիկ-առասպելաբանական կերպարները «Սասնա ծռեր» էպոսում», կազմված է հինգ ենթագլուխներից, երկրորդ գլուխը՝ «Վեպի հերոսների կանայք. հակահերոսուհիներ. կանանց այլ կերպարներ»՝ յոթ ենթագլուխներից: Ատենախոսության ծավալը կազմում է 212 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, գիտական նորույթը, ուսումնասիրության մեթոդները, կիրառական նշանակությունը:

ԳԼՈՒԽ I

ԿԱՆԱՆՑ ԱՐԽԱԻԿ-ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

Աշխատանքի առաջին գլխում ներկայացվում են էպոսի ժանրի բնորոշումները հայ և օտար հետազոտողների կողմից, դիտարկվում է միմյանց հետ փոխկապակցված հերոս-հերոսուհի-հերոսականություն իրողությունների արտացոլումը էպոսում, քննության են ենթարկվում կին հերոսուհիների այն կերպարները (Ծովինար, Դեղձուն ծամ, Պառավ), որոնցում բավականին պարզորոշ պահպանված են առասպելաբանական շերտեր, և որոնք խորը արխաիկ ակունքներ ունեն ու ընդհանրություններ են հանդես բերում այլ ժողովուրդների էպոսներում գործող նմանատիպ դյուցազնուհիների հետ:

1.1.Էպոսի ժանրի բնորոշումը

Էպոսը, լինելով պատմական լայնածավալ բանաստեղծական ստեղծագործություն, տարբեր ժամանակներում այս կամ այն դպրոցի ուսումնասիրողների կողմից բնութագրվել է տարբեր տեսանկյուններով: Էպոսի ժանրային առանձնահատկություններին, մասնավորապես պատմական և առասպելաբանական հատկանիշներին և դրանց հարաբերակցությանը անդրադարձել են ինչպես հայ (Մ. Աբեղյան, Ա. Սահակյան, Էդ Ջրբաշյան, Ա. Պետրոսյան), այնպես էլ ռուս բանագետները, ընդգծելով նաև էպոսին բնորոշ հերոսականության հատկանիշը (Ե. Մելետինսկի, Վ. Ժիրմունսկի, Վ. Պրոպ): Անգլալեզու բառարաններում էպոսը սահմանվում է նախ և առաջ որպես բանավոր ավանդություն, երկար պատմողական բանաստեղծություն կամ պատմություն՝ հերոսական գործերի, նշանակալի պատմական իրադարձությունների կամ ազգածագման մասին: Ընդգծվում է, որ էպոսին բնորոշ է էպիկականության հատկանիշը, նաև այն, որ էպոսը սերունդներին փոխանցվում է առանց գրավոր միջնորդության:

1.2.Հերոս-հերոսուհի-հերոսականություն

Պատմական իրականությունը էպոսում ավելի լայն ընդգրկունություն ունի, քան հեքիաթում, բայց և, ինչպես նկատվել է, պատմական անձերի ու դեպքերի մասին հիշողությունը չի մտնում էպոսի խնդիրների մեջ[3]: Մյուս կողմից՝ վիպական հերոսների շնորհիվ ստեղծվում է այն հերոսական իրականությունը, որն անհրաժեշտ է իդեալական հերոս և հերոսական պատմություն կերտելու համար: Հերոսականությունը, ըստ էության, էպիկական հյուսվածքում բնորոշ է դառնում վեպի «յուրային» գրեթե բոլոր հերոսներին: Հերոս-հերոսականություն

[3]Пропп В., Фольклор и действительность, Москва, 1976, Издательство «Наука», с. 102.

վիպական կարևոր բաղադրիչն էպոսում, ըստ էության վերջնական նպատակ լինելով, նաև արդյունք է ամբողջ վիպական շղթայում իշխող հերոսական տրամադրության, և այդ շղթայում բացառություն չեն կանայք: «Սասնա ծռեր» դյուցազնավեպում կանանց բնորոշ հերոսականության հատկանիշները անհրաժեշտ զուգահեռներով և փոխկապակցումներով դրսևորվում են հերոս-հերոսուհի միասնության մեջ: Պետք է ենթադրել, որ Սասնա տան կանանց հատկանիշների հերոսականությունը կարող է պայմանավորված լինել նախ և առաջ մեր բանահյուսությանը բնորոշ վիպական ավանդությամբ: Բացի այդ՝ էպոսում կնոջ այդօրինակ դերակատարումը թերևս նաև հայ հանրության մեջ գոյություն ունեցող սոցիալական և հանրային ընկալումների, պատկերացումների արտացոլումն է: Հայ ընտանիքին ի սկզբանե բնորոշ է եղել մենամուսնությունը, որը պայմանավորված է հայ հասարակության մեջ ձևավորված և հազարամյակներով ամրագրված բարքերով ու սովորույթներով: Այս փաստը, բնականաբար, ենթադրում է նաև ի սկզբանե կնոջ դերի արժևորում հայ ընտանիքում, ինչը չէր կարող իր արտահայտությունը չունենալ ազգային վեպում: Հերոսականության կարևորագույն նախապայմանը պատմականությունն է, այն իրական ու «կեղծ» պատմական փաստերի առկայությունը, որոնց իրողությանը ասացողը անվերապահ հավատում է: Պատմական այս որոշակիությամբ էլ պայմանավորված է մեր վեպում ոչ միայն գլխավոր հերոսների՝ Մհերի, Դավթի, Փոքր Մհերի, այլ նաև հերոսուհիների՝ Արմաղանի, Խանդութի, Գոհարի (նաև մյուս կերպարների՝ Քեռի Թորոսի, Ձենով Հովանի) ընդգծված հերոսականությունը: «Սասնա ծռեր» դյուցազնավեպում հերոսականության դրսևորումները հետաքրքիր զուգահեռներով են զարգանում հերոս-հերոսուհի միասնության մեջ՝ հանդես բերելով մի շարք ընդհանրություններ: Որպես վիպական-առասպելական հերոսներ՝ կանայք էպոսում մինչև ամուսնությունը ոչ միայն դյուցազնական ուժի կրողներ են, այլ նաև «կարդացվոր» են կամ կախարդներ, ինչը պայմանավորված է նրանց մեջ հզոր աստվածությունների արձագանքների հեռավոր հիշողությամբ: Ամուսնությունից հետո այս կանայք դառնում են հերոսական մայրեր, որոնց շնորհիվ պիտի շարունակվի դյուցազունների սերունդը, աշխարհ գա երկիրն ու ցեղը պահող-պաշտպանող դյուցազնական հերոսը, և նրանք արդեն չունեն իրենց նախկին աստվածային զորությունը: Իրենց ամուսնական հարաբերություններում կանայք և՛ սաստիկ խանդոտ են, և՛ վրեժխնդիր, երբ ամուսիններն անհավատարիմ են, բայց նրանց վրեժխնդրության մեջ անգամ հերոսականություն կա:

1.3.Ծովինարն իբրև վաղնջական նախամոր արքետիպ

«Սասնա ծռեր» դյուցազնավեպի արխիկ առասպելաբանական շերտերը կապվում են էպոսի առաջին ճյուղում առկա երկու հզոր թեմաների՝ Սասնա հերոսների ծննդի և Սասունի հիմնադրման պատմության հետ, որոնք սերտորեն միահյուսվում են Խաչապաշտ թագավորի աղջկա կամ որ նույնն է՝ Ծովինարի

առասպելաբանական կերպարին, նրա շուրջ հյուսված վիպական ասքին։ Ծովինարն այն հզոր իգական նախաստեղծ հիմքն է, որից սկիզբ են առնում և հյուսվում Սասնա տան պատմությունն ու Սասնա հերոսների վարքը՝ հերոսական կռիվներով և սուրբ ամուսնությամբ։ Վեպում Ծովինարի շուրջ հյուսված են անապական հղիության և երկվորյակների մոր երկու հիմնական թեմաները։ Սրանցով վեպը կապվում է արխաիկ առասպելաբանական մտածողության համակարգին՝ միաժամանակ դառնալով գեղեցիկ և դյուցազնական ասքի սկիզբ։ Այս հերոսուհին պատումներում միշտ չէ, որ կրում է Ծովինար անունը։ Այն առկա է վեպի ինսունչորս պատումներից նրանցում (թվով 11), որոնք գրի են առնվել 1970-ականներին, և որոնց ասացողները ուղղակի կամ անուղղակի ձևով կարող էին ծանոթ լինել համահավաք բնագրին։ Այսպիսով, հնարավոր է՝անվան գործածությունը պայմանավորված է համահավաք բնագրի ազդեցությամբ։ Ծովինար անվան ստուգաբանությանը անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ։ Բոլոր մեկնաբանություններում էլ անունը կապվում է *ծով* բառի հետ, որով հավաստվում է հերոսուհու կապը ջրային տարերքի հետ։ Մյուս կողմից, Հ.Աճառյանը Ծովինար անվան մեջ տեսնում է *ծով* և *հուր, կրակ*(արաբ. *nar*) բաղադրիչներ՝ բառին վերագրելով *փայլակ* իմաստը։ Եվ քանի որ որոշ պատումներում Ծովինար անունը կրում է «լուս» մակդիրը, կարելի է եզրակացնել, որ Ծովյան-Ծովինարը նաև երկնային լույսի, հրի խորհրդանիշն է։ Ծովինարի առասպելաբանական, երկնային, ամպրոպային էության մասին Մ. Աբեղյանը նշել է, որ ժողովրդական հավատալիքներում նա ամպրոպի, կայծակի ու փայլակի անձնավորում է, մի պաշտելի առասպելական էակ, հրաչյա և հրեղեն մի կին, որ վերին երկնքում է ապրում, և ամպրոպի ժամանակ խաղալով՝ վայրկենապես ցույց է տալիս իր երեսը, որից և փայլատակում է։ Վեպում ամենակարևոր մոտիվներից է երկվորյակներին և նրանց ծնող դիցուհու կապը ջրի (հիմնականում քաղցրահամ), ջրային տարերքի հետ։ Այս առումով կարևոր է նաև, որ Ծովինարի կերպարի համար առանցքային նշանակություն ունի կույս-մոր կամ կուսական հղիության գաղափարը, որը տարածված է աշխարհի շատ ժողովուրդների հավատալիքներում, նաև հեքիաթներում, առասպելներում, էպոսներում։ Ծովինարի կերպարը ոչ միայն աղերսներ է հանդես բերում երկնքի, երկնային հաստատության հետ՝ որպես կապուտ կապավոր, ծիրանագույն զգեստով, երկնագույն քողով կին, Կաթնաղբյուրից ջուր խմող և ծիրանի ծովից կամ արուն ծովեն ձեն հանող դիցուհի, այլ նաև մթնոլորտային, ամպրոպային այլ երևույթների հետ է կապվում։ Բացի այդ՝ Ծովինարին և իր որդիներին կարելի է բնորոշ համարել Մայր դիցուհու և նրա ամպրոպային ու արեգակնային բնույթի որդիների գործառույթները։ Ծովինարի կերպարի համար բնութագրական են վիպական զարգացումները։ Երկրին պատուհասած վտանգը սովորական առասպելական գեղեցկուհու կերպարը բարձրացնում է միջավայրից։ Նրա կերպարում մի կողմից ընդգծվում են սեփական երկրի, ժողովրդի համար ինքնազոհողության գնացող հայ կնոջ որակները, մյուս կողմից՝ իր հավատքը ոչ մի պայմանով չուրացող քրիստոնյա հայ կնոջ կրոնասիրությունը, և վերջապես՝

հայ մոր նվիրվածությունը իր որդիներին, մի բան, որն իր մեջ ամփոփում է ընդհանրապես երկվորյակների մորը բնորոշ ընդհանուր առասպելաբանական հատկանիշները, որոնց մեջ առանձնանում է նաև նրա՝ որպես դաստիարակի հատկանիշները: Պետք է նկատի ունենալ նաև, որ Ծովինարը անցնում է կանանց նվիրագործման ծեսին բնորոշ անցումային փուլերով, ինչն արտացոլում են նրա շուրջ հյուսված մոտիվներն ու մոտիվաշարերը: Ընդհանուր առմամբ՝ Ծովինարը մայրության խորհրդանիշ է. նրա կերպարում ամփոփված են հայ կնոջը բնորոշ հատկանիշների՝ գեղեցկության, խոհեմության, հայրենասիրության, վճռականության, ուժի, նվիրվածության, սիրո, անձնազոհության վերաբերյալ դարերի բովում քննություն բռնած պատկերացումները: Ուստի պատահական չէ, որ երբ խոսքը վերաբերում է «Սասնա ծռերի» կանանց կերպարներին, որպես մոր կերպար մեր դեմ առաջինը հառնում է Ծովինարի կերպարը՝ որպես նախամայր:

1.4.Դեղձուն Ծամի առասպելաբանական ակունքները

Դեղձուն Ծամի կամ Քառասուն Ճյուղ Ծամի կերպարը «Սասնա ծռերում» լրացնում է արևի խորհրդանիշ գլխավոր հերոսների՝ Մեծ և Փոքր Միհերների շարքը: Ծովինարն ու Դեղձունը՝ որպես մեր հերոսների նախամայրեր, միմյանց լրացնելով՝ ապահովում են առաջին ճյուղում չորս հզոր տարերքների առկայությունն ու միասնականությունը. Ծովինարը՝ ջուր, երկիր (պտղաբերություն), Դեղձունը՝ արև (կրակ), օդ կամ քամի: Իրենց ընդերքում ունենալով չորս տարերքները՝ այս հզոր առասպելական կանայք առնչվում են երկվորյակների առասպելին, իսկ Դեղձունը, իր հիմնական գործառույթներով հանդերձ, առնչվում է նաև Միհերի (Միհրի) առասպելին՝ իբրև Արևամայր՝ հանդես բերելով նաև բժշկելու, ապաքինելու հնագույն գործառույթը Փոքր Միհերի ճյուղում: Պետք է նկատել, որ Դեղձուն Ծամ կամ Քառասուն Ճյուղ Ծամ անունները, իրենց բառային իմաստով, առասպելաբանական մակարդակում ևս ակնհայտորեն խոսում են այս հերոսուհու՝ արևի հետ սերտ առնչությունների մասին: Մազը կամ ծամերը (հյուս) ենթադրում են առասպելական ուժ, քանի որ ուղղակի կամ անուղղակի ձևով կապվում են արևի պաշտամունքի հետ, միաժամանակ դառնում են բնության կապող և արձակող ուժերի խորհրդանիշներ: Թեև Դեղձունի շուրջ հյուսված մոտիվաշարերը հարստությամբ աչքի չեն ընկնում, սակայն դրանք ընդգծում են այս հերոսուհու առասպելաբանական բազմաշերտությունը: Քառասուն Ճյուղ Դեղձուն Ծամը նախ իր երկրի արքայադուստրն է, ընդ որում՝ նա և իր քաղաքը միայն առասպելաբանական պատկերացումների խորհրդանիշներ են և որևէ կապ չունեն պատմականության հետ: Իբրև Կույս դիցուհի՝ Դեղձունը ամուսնության մեջ գերակա դիրք ունի, և ընտրության իրավունքը իրենն է: Ի տարբերություն Խանդութի և Գոհարի, որոնք ձգտում են հերոսներին պահել իրենց երկրում, Դեղձունը պահանջում է, որ Սանասարը գա և իրեն տանի, ինչը նույնպես պայմանավորված է հնագույն առասպելաբանական պատկերացումներով, որոնց հիմքերում ընկած են արևի երկակի բնույթի կամ վիշապամարտի առասպելները:

Պետք է ենթադրել, որ Դեղձունն իր մեջ կրում է գարնան հաղթական արևի, բնության զարթոնքի հնագույն առասպելաբանական պատկերացումները, որոնք, որպես վիշապամարտի արտահայտություն, կապվում են տարվա եղանակների կամ արևի շրջապտույտի հետ: Թերևս կարող ենք հավաստել, որ այս կերպարում դրսևորվում է նաև արևի երկակի բնույթը՝ ձմեռային և գարնանային շրջապտույտով պայմանավորված: Երբ Դեղձունը փակված է իր ամրոցում, չար կախարդ է. նա կախարդում է իր «ուզնկաններին»՝ նրանց տարբեր կենդանիների կերպարանք տալով, կամ հեքիաթի չար պառավի նման քարացնում է նրանց և քաղաքը: Այսինքն՝ Դեղձունը՝ «ակն արեգակ» աղջիկը, երբ փակված է կախարդական քաղաքում վիշապի կամ վիշապ հոր կողմից, մարմնավորում է ձմռան արևը՝ իր մեջ խտացնելով նաև տարվա եղանակների կամ արևի շրջապտույտի պատկերացումները: Իսկ երբ ազատվում է արև-աղջիկը, կախարդական զորությունը վերանում է, և դուրս է գալիս գարնանային արևը՝ քաղաքը լուսավորվում է: Այսպիսով, հերոսուհին հանդես է բերում գարնան, եղանակի աստծո հնագույն առասպելաբանական հատկանիշներ: Դեղձունի կերպարում տեսնում ենք ոչ միայն արևը, այլ նաև Մայր դիցուհուն՝ իր գործառույթներով կամ հզոր կախարդանքով: Որպես կերպարանափոխող հզոր կախարդուհի, բնության ուժերը կապող և արձակող դիցուհի՝ Դեղձունը ընդհանրություններ է հանդես բերում տարբեր ժողովուրդների (պարսիկներ, վրացիներ) նույնատիպ դիցուհիների հետ: Սանասարի հետ ամուսնությունից ծնվում է հզոր ժառանգը՝ Միհրը, և Դեղձունը դառնում է Միհրամայր-Արևամայր, սակայն վեպում չի դրսևորվում նրա կապը որդու հետ, ավելին, վեպը կարծես այդ խնդիրը չի էլ դնում, պարզապես նշվում է, որ ծնվում է Միհրը:

1.5. Պառավի դիցաբանական տարբերակային հատկանիշներն էպոսի ճյուղերում

Պառավի կերպարը տարածված է աշխարհի շատ ժողովուրդների առասպելներում, ծեսերում և ավանդություններում: Մեր էպոսի ճյուղերում և տարբերակներում այս կերպարը հետաքրքրական դրսևորումներ ունի՝ պատումից պատում ընդհանրությունների հետ միասին հանդես բերելով զանազանություններ, հաճախ միախառնելով էթնիկական, առասպելական ու ծիսական հատկանիշներ: Նա հանդես է գալիս պատումների սկզբում, այլ կերպ ասած՝ հերոսների մանկության կամ պատանեկության շրջանում, և հերոսի գործողություններն ու հատկանիշները բնութագրվում են առասպելական մայր-որդի հարաբերությունների տեսանկյունից: Դիցաբանության մեջ պառավը ամենաարխաիկ կերպարներից է համարվում: Հեքիաթներում (հրաշապատում), նաև առասպելներում պառավը լինում է կա՛մ բարի, կա՛մ չար: Նա հանդես է գալիս նաև գիշերամոր տեսքով, որն ապրում է ավերակներում և հետապնդում է արևին: Մեր վեպում պառավի կերպարը, որը դրսևորվում է նաև ծերունու տեսքով, գործում է առաջին, երկրորդ (մեկ անգամ հանդիպող), նաև երրորդ, չորրորդ ճյուղերում:

Առաջին (մեկ անգամ էլ՝ երկրորդ) ճյուղում պառավ/ծերունին Սանասարին կամ Բաղդասարին ամուսնության նպատակով փորձություններ հաղթահարելու համար հյուրընկալողի և խորհրդատուի գործառույթներ է իրականացնում: Պառավ//ծերունու կերպարով դրսևորվում են հեքիաթների համանման կերպարներին բնորոշ խորհրդատուի, զգուշացնողի, նվիրագործման և որդեգրման ծեսը իրականացնողի, միջնորդի գործառույթները, և այս բոլորը ապահովում են հերոսի ամուսնությունը, ինչը հեքիաթին բնորոշ հիմնական հատկանիշներից մեկն է: Ընդգծված հեքիաթային որակները հուշում են, որ առաջին ճյուղի պառավը շատ հարազատ հերոս չէ էպոսի համար, ինչով էլ պայմանավորված է պատումներում նրա ոչ հաճախադեպ լինելը:

Կայուն մոտիվաշարերով և կարևոր դերակատարմամբ է առանձնանում Արտատեր Պառավի կերպարը վեպի երրորդ ճյուղում: Ի տարբերություն հեքիաթների պառավների՝ Արտատեր Պառավի կերպարը, ինչպես ընդհանուր առասպելաբանության մեջ հանդիպող նման այլ կերպարներ (Դեմետրե, Էրդա, Անահիտ), առնչվում է վարուցանքի իրողությանը: Պառավի այս գործառույթը տեսնում ենք նաև կելտական, հունական առասպելաբանության մեջ: Կելտական և հունական առասպելաբանության մեջ պառավին զուգահեռ կերպարներն (Թայլտիուն, Հեկալա) ունեն նաև այս կերպարին բնորոշ՝ հերոսի համար դաստիարակ-մոր, նվիրագործման ծիսարարի, խորհրդատուի դերը: «Սասնա ծռերում» Արտատեր պառավի կերպարը դրսևորվում է և՛ կենսափորձ ունեցող կնոջ, և՛ դաստիարակիչ մոր տեսքով, նաև ընդհանրություններ է հանդես բերում հեքիաթի՝ խրատատու, նվիրագործման ծիսարար, միջնորդ պառավի հետ: Եթե պառավի գործառույթները ընդհանուր են հեքիաթներում և առասպելներում, ապա «Սասնա ծռերում» Արտատեր պառավը ենթարկվում է էպոսի վիպական թելադրանքին, կերպավորման էպիկական ձևերին, երրորդ ճյուղում հանդես եկող հերոսի գործառույթներին ու վերջնական նպատակին: Այդ իմաստով՝ Արտատեր պառավը, որպես նվիրագործման ծիսարար, կարելի է ասել, մանուկ Դավթին «ուղեկցում է» ժամանակային երեք չափումների՝ անցյալի, ներկայի և ապագայի միջով, որը վեպում դրսևորվում է շինարարության, հարկահանության և հոր զենքերի ու ձիու ձեռբերման մոտիվաշարերով: Այսպես իրագործվում է վեպում վերջին կին-մայր հերոսուհուն՝ Պառավ-մորը վերապահված առաքելությունը: Տարբեր ժողովուրդների վիպական բանահյուսության մեջ հանդիպում ենք պառավի կերպարների, սակայն մոտիվների և գործառույթների ծավալի տեսանկյունից դրանք նույնչափ հարուստ չեն, թեպետ տիպաբանորեն նույն շարքի հերոսներ են: Այն բացառիկ դերակատարումը, որ էպոսի երրորդ ճյուղում ունի Արտատեր Պառավը, ցույց է տալիս նրա կապը երկրի, հողի պաշտամունքային շերտերի հետ:

Պառավի գործառույթները ճյուղից ճյուղ փոխվում են՝ գլխավոր հերոսների բնույթին ու ճյուղի տրամաբանությանը համապատասխան: Եթե առաջին ճյուղում նա հեքիաթի պառավներին բնորոշ գործառույթներ ունի, երրորդ ճյուղի Արտատեր Պառավն առնչակցվում է հողի, պտղաբերության, վարուցանքի հետ,

նաև հանդես է բերում դաստիարակ-մոր և այլ հատկանիշներ, ապա չորրորդ ճյուղում գործ ունենք առաջին և երրորդ ճյուղերից բնույթով ու գործառույթներով տարբերվող Պառավի կերպարի հետ: Չորրորդ ճյուղում հանդիպում են ոչ թե մեկ, այլ երկու, երբեմն երեք կամ չորս գործառույթներով տարբեր պառավներ, որոնց հնագույն, արխաիկ բնույթի մեջ երևան են գալիս խորը թաքնված ծիսական շերտեր: Դրանցով պայմանավորված՝ հերոս-պառավ փոխհարաբերությունների բնույթը գրեթե հակադիր է նախորդ ճյուղերի հարաբերությունների տրամաբանությանը, այնպես, որ այս կերպարները հանդես են բերում նաև չար պառավներին բնորոշ գործառույթներ և սպանվում են Մհերի կողմից: Դրանց շարքում կարող են լինել շերեփը ձեռքին վրիժառու պառավը, ավերակ քաղաքի մեջ ծուխ անող պառավը, Մհերին հորից հանող և աղջկան կամ աղջիկներին նրա հետ ամուսնացնել ցանկացող պառավը, նաև հանդիպում են «ծծերը» թևերին գցած մարդակեր կամ դևերի մայր պառավների կերպարներ: Պետք է նշել նաև, որ չորրորդ ճյուղի պառավների կերպարները հաճախ հանդիպող կերպարներից չեն:

ԳԼՈՒԽ II.
ՎԵՊԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԿԱՆԱՅՔ. ՀԱԿԱՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐ. ԿԱՆԱՆՑ ԱՅԼ ԿԵՐՊԱՐՆԵՐ

Այս գլխում դիտարկվում են այն կին հերոսուհիները, որոնք ներկայանում են պատմականության որոշակի երանգներով (Արմաղան, Խանդութ, Գոհար, նաև՝ Իսմիլ, Չմշկիկ Սուլթան), անդրադարձ է կատարվում նաև Սառյեի և կանանց երկրորդական կերպարներին:

2.1.Ինքնազոհության վիպական դրսևորումն Արմաղանի կերպարում

Ինչպես Սասնա հերոսուհիներից յուրաքանչյուրի, այնպես էլ Արմաղանի կերպարը ենթարկվում է ճյուղի վիպական պահանջներին ու տրամաբանությանը: Վիպական առումով Արմաղանը ընդհանրություններ է հանդես բերում Ծովինարի հետ՝ ունենալով անհատականացման աճ, երբ կենցաղային մակարդակում վիրավորված և ամուսնուն մերժած կինը վերածվում է ցեղի, երկրի մասին մտածող տիրուհու, թագուհու (ինչը նույնպես խոսում է նրա հզոր անհատականության մասին), որն առանց որևէ երկմտանքի իր կյանքն է տալիս, որպեսզի ծնվի հզոր ժառանգը՝ հանուն երկրի պաշտպանության: Երդմնազանցության և ինքնազոհողության առումներով Արմաղանը վիպական մակարդակում ընդհանրություններ է հանդես բերում Խանդութի հետ, երբ ամուսիններից մեկի երդմնազանցությունը տարածվում է երկուսի վրա: Ի տարբերություն Սասնա տան կանանց, Արմաղանը ամուսնությունից հետո չի կորցնում իր հզորությունը, ընդհակառակը, որպես կին՝ նա ինքն է թելադրողը դառնում ամուսնական հարաբերություններում՝ չկորցնելով իր խոսքի ու կամքի ուժը: Որքան էլ հզոր է Մհերը, սակայն Արմաղանը նրա առջև փակում է դուռ ու

դարպաս, և միայն երկրի ու Աստվածային կամքի շնորհիվ է նա երկրորդ անգամ կենակցում Միհրի հետ՝ կատարելով կնոջից մայր անցումը: Արմաղանի կերպարում առկա են նաև խորը առասպելաբանական շերտեր, որոնք բնորոշ են հեքիաթներին: Մասնավորապես՝ նկատի ունենք աղբյուրի ակը փակող դևի կամ վիշապի կողմից գերվելը, Միհրի կողմից վիշապին սպանելն ու աղջկան ազատելը: Ընդհանուր առմամբ՝ երկրորդ ճյուղի գլխավոր հերոսուհու՝ Արմաղանի կերպարը չնայած աչքի չի ընկնում հարուստ մոտիվաշարերով և մոտիվներով, սակայն այն իր մեջ խտացնում է Սասնա կանանց բնորոշ հիմնական և կարևոր առանձնահատկությունները:

2.2. Խանդութի կերպարի վիպաառասպելաբանական բազմաշերտությունը

Խանդութը հերոսականության, նվիրումի, անձնազոհության, հայ կնոջ հավատարմության և ընտանեկան կեանքի մաքրության մարմնավորումն է: Այդ հատկանիշները նպաստում են նրա հերոսական կողակցի՝ Դավթի կերպարի ամբողջականացմանն ու համակողմանի ընկալմանը: Էպոսի երրորդ ճյուղում Խանդութին առնչվող մոտիվները աչքի են ընկնում բազմաշերտությամբ, ինչի շնորհիվ էպոսի կանանց շարքում այս կերպարը առավել ընդգծվածն ու կատարյալն է դառնում: Այն առանձնանում է և՛ անհաղթ ամազոնուհու իր առասպելաբանական հատկանիշներով (քաջ, կռվող, գերբնական ուժի տեր), և՛ գեղեցկության, առաքինության, կանացիության մարդկային գեղեցիկ որակներով, նաև հայ կնոջը բնորոշ՝ սիրող, նվիրվող, հավատարիմ զուգընկերուհու հատկանիշներով: Խանդութի կերպարը նախ ներկայանում է իբրև մայրաստվածություններին բնորոշ Կույս դիցուհի և անհաղթ ամազոնուհի, ապա նաև՝ Սասնա հերոսի՝ Դավթի կերպարը լրացնող, ամբողջացնող, «Սասնա տանը» հզոր ժառանգ պարգևող հերոսական կին և մայր: Խանդութն իրեն նախորդող հերոսուհիների կերպարներից (Ծովինար, Դեղձուն, Պառավ) առանձնանում է միայն իրեն բնորոշ հերոսականությամբ, պատմականությամբ, վիշապամարտիկին բնորոշ առանձնահատկություններով, միևնույն ժամանակ՝ իր խորքում պահպանած հնագույն առասպելաբանական շերտերով պայմանավորված՝ ընդհանրություններ է հանդես բերում նշված հերոսուհիների, նաև հայ և համաշխարհային առասպելաբանությունների մեջ հայտնի նույնատիպ դիցուհիների հետ: Վեպում Խանդութն ընկալվում է իբրև պատմական անձ, որն իր երկրի տիրուհին է և նրա սահմանները պահողը: Հետաքրքրական է, որ Դավթի ու Խանդութի մասին զրույցը արձանագրել են դեռևս 16-րդ դարի պորտուգալացի երկու ճանապարհորդներ: Նկատենք, որ Խանդութ անվանը հայ բանագիտության մեջ բազմիցս անդրադարձել են և փորձել են ստուգաբանել, սակայն, ըստ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջյանի, անունը դեռ կարոտ է ճիշտ ստուգաբանության: Վեպում Խանդութը դյուցազնական կնոջ օրինակ է: Նա «իր կուսական հպարտության մեջ» իր համար այր է ճանաչում միայն նրան, ով իրեն հաղթում է մենամարտի մեջ և իրենից ուժով գերազանց է լինում: Աշուղների գովքից մինչև Դավթի հետ «Խաս բախչում»

հանդիպումը, Դավթին ապտակելը, կռվի դաշտում «ջանդակները» նիզակի ծայրով թեթևորեն այս ու այն կողմ նետելը, մենամարտը Դավթի հետ, ամուսնությունը, հզոր ժառանգի ծնունդը՝ այդ ամենը վկայում է Խանդութի կերպարում հզոր մայրաստվածության արձագանքների մասին: Հիմքում ունենալով խորը առասպելաբանական շերտեր՝ վեպին բնորոշ էպիկական թափով ու գեղեցկությամբ հյուսվում և ծավալվում է Խանդութի և Դավթի սիրո և ամուսնության պատմությունը, որի ընթացքում «ամազոնուհին՝ «զորբա աղջիկը», հրաժարվում է իր ռազմատենչ կյանքից՝ հաղթվելով հերոսից, ամուսնանում է նրա հետ և ծնում հզոր ժառանգին՝ ստանձնելով մայրությունը ամուսնական կյանքում: Վիպական կառույցում Խանդութի կերպարը ավելի պատմական, երկրային է թվում, բայց մյուս կողմից՝ վեպում հերոսուհիներից ոչ մեկը այնպես հզոր առասպելական գծերով չի ներկայացված, ինչպես նա: Դյուցազնավեպերին բնորոշ ամենակարևոր մոտիվը վեպում հերոսուհու մենամարտն է հերոսի՝ Դավթի հետ, որը սուրբ ամուսնությունից առաջ հերոսի վերջին մենամարտն է կամ ավելի ճիշտ՝ մրցամարտը: Խանդութի կերպարում պահպանվել են արևային դիցուհիներին բնորոշ հատկանիշներ, սակայն հնագույն առասպելաբանական գծերը թաքնված են արտաքին «պատմական» շղարշի տակ, դրանք մի շարք դիպաշարերի ու մոտիվների շնորհիվ երևան են հանում կերպարի առասպելաբանական բազմաշերտությունը: Վեպը պահպանել է ոչ միայն մայրիշխանությունից հայրիշխանություն անցման մշակութային փուլերը, այլ նաև կանանց կերպարներում, մասնավորապես Խանդութի կերպարում, պահպանել է հնագույն սոցիալ-մշակութային համալիր կառուցվածքը՝ մի շարք դրսևորումներով, ներառյալ մայրիշխանության, հողագործական ժողովուրդներին բնորոշ նվիրագործման և հարսանեկան ծեսերի հնագույն շերտերը:

2.3.Գոհարի կերպարի դիցաբանական շերտերը

«Սասնա ծռերի» կանանց շարքը ամբողջացնում է վերջին ճյուղի հերոսուհին՝ Գոհարը կամ Քառասուն ճյուղ Գոհարը: Ինչպես էպոսի մյուս կանայք, այնպես էլ Գոհարը բացարձակ վիպական հերոսուհի է և մնացած կին հերոսուհիների նման սասունցի չէ: Պատումներում որպես կանոն տեղայնանում է և ներկայանում է իբրև Հալաբա թագավորի աղջիկ, որի հետ ամուսնանում կամ չի ամուսնանում Մհերը: Վիպական հյուսվածքում միշտ չէ, որ չորրորդ ճյուղը ենթադրում է Մհեր-Գոհար զույգի առկայություն, մինչդեռ մյուս զույգերի առկայությունը պարտադիր նախապայման է նախորդ ճյուղերի համար, որոնք վիպական ամբողջական տեսք և բովանդակություն են ստանում հենց հերոս-հերոսուհի զույգի և հզոր զավակի ծննդի շնորհիվ: Ի տարբերություն նախորդ ճյուղերի՝ չորրորդ ճյուղով փակվում է վիպական շղթան, և, բնականաբար, վերանում է հզոր ժառանգի խնդիրը, ինչն էլ ենթադրում է, որ Գոհարի կերպարի անհրաժեշտությունը նույնպես վերանում է: Այս է պատճառը, որ կերպարի քննությունը էպոսի տիպաբանական խմբերում (Մոկս, Մուշ, Սասուն)

հանգեցնում է տարբեր իրողությունների բացահայտման: Մոկաց ընդամենը երկու պատումներում է հանդես գալիս Գոհարը որպես Փոքր Միհրի կին: Բացակայում է նաև Սասնա պատումներում, որոնցում Միհրի ճյուղը կամ չկա, կամ շատ թույլ է արտահայտված: Փոքր Միհրի ճյուղը ավելի ամբողջական է Մշո պատումներում, և սրանցում է հիմնականում հանդես գալիս Գոհարը՝ որպես Փոքր Միհրի նշանած կամ կին: Ընդ որում՝ տիպաբանական Մուշ-Ալաշկերտ խմբի պատումներում Գոհարի շուրջ հյուսված մոտիվները համեմատաբար խիտ են և կայուն: Ինչպես վեպի նախորդ հերոսների կանայք, Գոհարը նույնպես մինչև ամուսնությունը, անգամ ամուսնությունից հետո էլ հանդես է բերում ռազմի և սիրո կամ Կույս դիցուհիներին բնորոշ հատկանիշներ: Նկատենք, որ վեպում Գոհար անունով հանդես է գալիս ոչ միայն Փոքր Միհրի կինը կամ նշանածը: Այդ անունով հերոսուհի հանդես է գալիս նաև վեպի տարբեր ճյուղերում՝ տարբեր գործառույթներով: Վիպական հորինվածքում Միհրի կին Գոհարը շատ նմանություններ ունի Սասնա տան մյուս հերոսուհիների հետ քաջությամբ, քնքշությամբ, հավատարմությամբ, անձնազոհությամբ: Այս կերպարում ուրվագծվում են արևի աստծո պաշտամունքի հետքերը, որոնք հավանաբար այնքան հին են, որքան Միհր-Միհրի կերպարում առկա հնագույն պաշտամունքային վերապրուկները: Հայտնի է, որ արևի աստվածությունների կանանց կերպարները նույնպես կրում են այդ աստվածության հետքերը, ինչի արտահայտություններից են նաև Քառասուն Ծամ կամ Քառասուն ճուղ մակդիրները, որոնք վեպում տրվում են մեկ Դեղձունին, մեկ էլ Գոհարին:

2.4. Իսմիլը՝ Մայր դիցուհու վիպական երկբնույթ կերպար

Էպոսում Սասնա կանանց հավասարազոր կերպար է Իսմիլ խաթունը կամ Ջոջ Մելիքի կինը, որն ամբողջացնում է Մայր դիցուհիներին բնորոշ առասպելաբանական պատկերացումները վեպում: Իսմիլը վեպի միակ կին հերոսուհին է, որը գործում է և՛ երկրորդ, և՛ երրորդ ճյուղերում, բայց տարբեր գործառույթներով. մի դեպքում՝ իբրև Մեծ Մելիքի կին, մյուս դեպքում՝ իբրև Փոքր Մելիքի մայր, ինչով էլ պայմանավորված է կերպարի երկակի բնույթը: Մոտիվների առումով հարուստ չէ Իսմիլի կերպարը, սակայն Սասնա հերոսների կյանքում այն ճակատագրական նշանակություն ունի: Նա ոչ միայն Սասնա հերոսների համար դառնում է կին և մայր, այլ նաև դառնում է այն կարևոր հակակշիռ բևեռը, որի շնորհիվ սյուժեն զարգանում է զարմանալի հակադրամիասնական ներդաշնակությամբ: Վեպի երկրորդ ճյուղում Իսմիլ խաթունը պահպանում է թագուհուն, Մեծ մորը բնորոշ հզորությունը, խոսքի ու կամքի ուժը: Այս ճյուղում Իսմիլ խաթունի հետ կապված կա միայն մեկ մոտիվ.նա անթաքույց պահանջատիրությամբ կանչում է Մեծ Միհրին Մըսր, որպեսզի իրեն կին առնի և տիրի Մըսրին: Առաջին հայացքից թվում է, թե Իսմիլը տարփական սիրո գործառույթով հերոսուհի է, և նրան պետք է «կիրք հագեցնող սիրեկան», սակայն իրականում վերջնական նպատակը մեկն է՝ ժառանգ, ով Մսրին տիրություն կանի: Այս առումով երկրորդ ճյուղի վիպական ուրվագծում Իսմիլը

դառնում է Մեծ Մհերի կնոջ կամ Արմաղանի կերպարին հավասարազոր և հակակշռող կերպար: Նա նույնպես Մեծ մոր, երկրի տիրուհու հզոր հատկանիշների կրող է: Վեպի երրորդ ճյուղում Իսմիլի կերպարը հանդես է բերում երկվորյակ եղբայրների մոր հատկանիշներ. ժողովրդական պատկերացումներում իսկապես Մելիքն ու Դավիթն ընկալվում են որպես երկվորյակ եղբայրներ, ինչը հատկապես պայմանավորված է Իսմիլի՝ որպես հզոր Մայր դիցուհու և ստնտուի կերպարով: Նկատենք, որ վեպում ակնհայտ է Իսմիլի կողմից մայրական գուրգուրանքը, սերը, ջերմությունը Դավթի հանդեպ, նույնիսկ ասացողներից մեկը նշում է, որ սրբի նման է պահում Իսմիլը Դավիթին: Այս կերպարը բնորոշվում է իմաստնությամբ, որդիներին դաստիարակելու, խորհուրդներ տալու բացառապես մայրական հատկանիշներով: Մոր մասին հայ ժողովրդի պատկերացումները էպոսում ամփոփվում են նաև Իսմիլի կերպարում: Անկախ ազգությունից, անկախ լավ կամ վատ, անգամ թշնամական հարաբերություններից՝ Իսմիլը մայրական սիրո ու ջերմության բարձրակետում է: Մոր նկատմամբ մեր ժողովրդի այս կարգի վերաբերմունքի դրսևորումը խոսում է նախ և առաջ հայ իրականության մեջ և հայ ընտանիքում մոր դերի առանձնակի ընկալման և գնահատման մասին, հատկապես որպես դաստիարակի, ինչով պայմանավորված է նաև հայ հասարակության մեջ ձևավորված կայուն արժեքային համակարգը:

2.5. Չմշկիկ Սուլթանը՝ սիրո և ռազմի դիցուհի

Ի տարբերություն «Սասնա ծռերի» գլխավոր կին հերոսուհիների՝ առաջին հայացքից նեղ, միագիծ է թվում Չմշկիկ Սուլթանի կերպարը, որը վեպում հանդես է գալիս միայն երրորդ ճյուղի վերջում: Վիպական կառույցում Չմշկիկ Սուլթանը դրսևորում է վրեժխնդիր կնոջ հատկանիշներ: Սակայն կերպարի քննությունը բացահայտում է առասպելաբանական շերտեր, որոնք ընդհանրության մեջ բնորոշ են սիրո, ռազմի Կույս կամ Մայր դիցուհիներին, և որոնք առնչվում են մեռնող-հառնող աստվածություններին՝ գայթակղություն-մերժում-պատիժ-հարություն առասպելաբանական բանաձևի շրջանակում: Վեպում Չմշկիկի գործառույթը կապվում է միայն Դավթի մահվան թեմային: Հերոսի մահը, որը հայր-ժառանգ հակամարտության արդյունք է, տեղի է ունենում ոչ թե օրինական, այլ ապօրինի ժառանգի ձեռքով (Մհերը չի սպանում Դավթին, թեկուզ նրանք մենամարտում են). պատումների հիմնական մասում Դավիթը սպանվում է Չմշկիկ Սուլթանի կամ նրա աղջկա ձեռքով: Այն փաստը, որ Չմշկիկ Սուլթանը վեպում ունի նախասահմանված կայուն տեղ և դերակատարում, խոսում է նրա դիցական էության մասին: Դյուցազնուհի-հերոս /Դավիթ/ հարաբերությունների ժառանգական ուրվագիծը նրան զուգադրելի է դարձնում սիրո, պտղաբերության, ռազմի դիցուհիների հետ (Ինդրա, Շամիրամ, Աֆրոդիտե, Կիբելե), ինչի շնորհիվ նա լրացնում, ամբողջացնում և բազմաշերտ է դարձնում վեպի առասպելական կանանց շարքը:

2.6. Սառյեի վիպաառասպելաբանական հատկանիշները

Վիպական կառույցում այս կերպարը հետաքրքիր ու յուրօրինակ դրսևորումներ ունի: Մի կողմից Սասնա հերոսների համար, մեղմ ասած, դրական դերակատարում չունի, մյուս կողմից՝ նա համարվում է Սասնա տան կանանցից մեկը: Ի տարբերություն կանանց գլխավոր կերպարների, որոնք (բացառությամբ Ծովինարի), սասունցի կամ յուրային չլինելով, հանուն իրենց հերոս ընտրյալների և նրանց հետ միասին դառնում են Սասնա տան զորության, բարոյական ու հերոսական լավագույն հատկանիշների պահպանողն ու փոխանցողը՝ Սառյեն Սասնա տան ներկայացուցիչ է, սակայն տարբերվում է մյուսներից՝ հիշյալ հատկանիշներից զուրկ լինելով: Այս կերպարը, լրացնելով և ամբողջացնելով Սասնա տան կանանց շարքը, իր առասպելաբանական ակունքներով ենթադրում է սիրո և գեղեցկության դիցուհիների հետ ժառանգական կապվածություն, ինչի շնորհիվ էլ կապվում է մեռնող-հառնող կամ ժայռում փակվող հերոսի առասպելույթի հետ: Սառյեի՝ ջրով արտահայտված տարփանքը և որոշ պատումներում երեխա ունենալու ցանկությունը ենթադրել է տալիս, որ հերոսուհու մեջ պահպանված են սիրո և պտղաբերության դիցուհիներին բնորոշ հատկանիշներ: Լինելով միջնադարյան արժեհամակարգի ազդեցության տիրույթում ստեղծված երկ՝ վեպը Սառյեի կերպարը ներկայացնում է իբրև փորձություն երիտասարդ հերոսների համար, որոնք այն հաղթահարում են հերոսին վայել արժանավորությամբ, պատվի ու բարոյական ըմբռնումների բարձր գիտակցությամբ:

2.7. Կանանց երկրորդական կերպարներ

Վեպում մեծ խումբ են կազմում կանանց երկրորդական կերպարները, որոնք գործառույթների տեսանկյունից բազմազանություն հանդես չեն բերում: Առանձնացրել ենք երկրորդական կերպարների մի խումբ, որոնց անունները պատումներում տարբեր են, սակայն գործառույթները նույնն են: Նաև տեսանելի է հակառակ երևույթը, երբ նույն անունով հերոսուհին տարբեր ճյուղերում հանդես է գալիս տարբեր գործառույթներով: Կան նաև կանանց անուններ, որոնք ուղղակի ասացողի կողմից հիշատակվում են, սակայն որևէ գործառույթ չի վերագրվում նրանց: Վեպի կանանց երկրորդական կերպարներից հիշատակելի է Արտատեր Պառավի աղջիկը (երրորդ ճյուղում), որը Մսրը գերի տարվող աղջիկների մեջ է, և Դավիթը առաջինը նրան է ազատում: Աղջիկը դրդապատճառ է, որպեսզի Արտատեր Պառավը Դավիթին հայտնի տոհմական գաղտնիքի մասին, ինչին անտեղյակ էր նա: Ոչ մեծ, սակայն էական գործառույթով է հանդես գալիս Դավիթի քույրը երրորդ ճյուղում, որով ընդգծվում է այն փաստը, որ Դավիթը Մսրում երկու կարևոր կանանց կողմից (Իսմիլի և աղջկա, այսինքն՝ մոր ու քրոջ կողմից) անսահման սիրված է եղել: Կան երկրորդական կանանց հավաքական կերպարներ՝ աղջիկ ծառաների խումբ, որն ուղեկցում է Ծովինարին և Խանդութին, Դավթի ուշադրությունը շեղող Մսրա պարող աղջիկներ և այլն:

Սրանց մեջ առանձնանում են Մսրա կանայք, որոնք Կոզբադինին ծաղրի են ենթարկում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց «Սասնա ծռեր» էպոսը, միջնադարյան էպոսներին բնորոշ հատկանիշներ ունենալով հանդերձ, ամփոփում է մեր ժողովրդի՝ հազարամյակներով ամրագրված գիտելիքները աշխարհի ու տիեզերքի վերաբերյալ, բարոյական, կրոնական, կենցաղագիտական ըմբռնումները, վաղնջական պատկերացումները բնության, մարդու, դրանց փոխներգործության, պատճառականության մասին:

Ուսումնասիրության եզրահանգումները ընդհանուր գծերով կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1.«Սասնա ծռեր» էպոսում, տղամարդ հերոսներին զուգահեռ, իրենց ուրույն դերն ու կարևորությունն ունեն կին հերոսները: Կանանց կերպարները ունեն արխաիկ առասպելաբանական, էթնոմշակութային և ծիսապաշտամունքային շերտեր, էպոսին բնորոշ պատմականության և հերոսականության հատկանիշներ, որոնց միջոցով ավելի ամբողջական ու բազմաշերտ են ընկալվում վեպի գլխավոր հերոսները:

2. Էպոսի կին հերոսուհիները պայմանականորեն ընդգրկվում են երկու խմբում: Առաջին խմբի կանանց կերպարներում (Ծովինար, Դեղձուն ծամ, Պառավ) հատկապես ընդգծված են առասպելաբանական շերտեր, որոնք խորը արխաիկ ակունքներ ունեն և ընդհանրություններ են հանդես բերում այլ ժողովուրդների էպոսներում գործող նմանատիպ դյուցազնուհիների հետ:

3. Ծովինարն ու Դեղձունը, որպես հզոր առասպելական կանայք, իրենց հիմքում կրում են բնության չորս տարերքները, առնչվում են երկվորյակների առասպելին՝ դառնալով հերոսների համար նախամայրեր:

4. Ծովինարի շուրջ հյուսված են երկու հիմնական թեմաներ՝ կուսական հղիության թեման և երկվորյակների մոր թեման: Վերջինս դրսևորվում է մի շարք ընդհանուր հատկանիշներով, մասնավորապես՝ երկվորյակների մորը բնորոշ հալածականության, զավակներին սպառնացող վտանգների կանխման և դաստիարակ մոր մշակութային հերոսուհու գործառույթներով:

5.Դեղձունը, իր հիմնական գործառույթներից բացի (վիշապամարտի Արև-աղջկա, արևի շրջապտույտի և եղանակի դիցուհու, կախարդուհու), առնչվում է նաև Միհրի (Միհրի) առասպելին՝ իբրև Արևամայր՝ միաժամանակ դրսևորելով նաև բժշկելու, ապաքինելու հնագույն գործառույթը Փոքր Միհրի ճյուղում:

6. Թեև երկրորդական, բայց ընդգծված առասպելաբանական կերպար է Պառավը, որը գործում է էպոսի բոլոր ճյուղերում: Պառավի գործառույթները ճյուղից ճյուղ փոխվում են՝ գլխավոր հերոսների բնույթին ու ճյուղի տրամաբանությանը համապատասխան: Առաջին ճյուղում Պառավը հեքիաթի պառավներին բնորոշ գործառույթներ ունի (նվիրագործման ծեսը կատարողի, խարատատուի, միջնորդի, որդեգիր մոր և այլն): Չորրորդ ճյուղում հանդիպում են

երկու, երբեմն երեք կամ չորս գործառույթներով տարբեր պառավներ, որոնց հնագույն, արխաիկ բնույթի մեջ երևան են գալիս ծպտյալ ծիսական շերտեր՝ դրսևորելով նաև չար պառավներին բնորոշ գործառույթներ:

7. Երրորդ ճյուղի Արտատեր Պառավի կերպարը առնչվում է վարուցանքի իրողությանը՝ ընդգծելով Պառավի կապը երկրի, հողի պաշտամունքային շերտերի հետ: Նա Մայր-երկրի, Մայր-հողի առկայացումն է, հայկական Դեմետրան: Նաև հանդես է բերում Դավթին նվիրագործությունների մղող դաստիարակ-մոր հատկանիշներ:

8. Վեպում ոչ միայն գլխավոր հերոսների (Մհեր, Դավիթ, Փոքր Մհեր), այլ նաև հերոսուհիների (Արմաղան, Խանդութ, Գոհար) ընդգծված հզոր հերոսականությունը պայմանավորված է որոշակի պատմականությամբ, ինչի շնորհիվ նրանց անունները կապվում են կոնկրետ միջավայրի, պատմական և աշխարհագրական տեղավայրերի, տեղանունների հետ:

9. Արմաղանը դրսևորում է վեպին բնորոշ կանանց անհատականության և ինքնազոհողության հատկանիշներ՝ վիրավորված կնոջից վերաճելով իր ցեղի և երկրի անվտանգության մասին մտածող հզոր տիրուհու: Նա հանդես է բերում վիշապասպանության, թագավորի աղջկա ազատման արխաիկ առասպելաբանական մոտիվներ, որին ազատելուց հետո երկնային ջրերը ազատվում են և ձմեռը հետ է քաշվում:

10. Վեպի հերոսուհիները նախ ներկայանում են իբրև անհատ, երկրի տիրուհի և ապա՝ սեփական հայրենիքի համար զոհաբերությունների պատրաստ հերոսական մայր և կին (Ծովինար, Արմաղան, Խանդութ, Գոհար)՝ դրսևորելով ազգային վիպաառասպելաբանական ավանդույթին բնորոշ անհատականացման աճ:

11. «Սասնա ծռերի» կանանց կերպարների զարգացման հիմքում երկու առանցքային իրողություններ են. ա) հերոսուհիները մինչև ամուսնությունը առասպելական ուժով ու քաջությամբ աչքի ընկնող հզոր Կույս և Մայր դիցուհիներ են, բ) ամուսնությունից հետո նրանք երկրային կանայք և մայրեր են, ուստի կորցնում են իրենց ուժն ու կախարդական զորությունը՝ ենթարկվելով նախատեսված նվիրագործման խորհրդաձեսերի:

12. Վեպի հերոսուհիների մեջ հզոր մայրաստվածության հետքերը պահպանվել են հատկապես Խանդութի կերպարում, և նկատելի են մայր դիցուհի Անահիտի հետ Խանդութի որոշ ընդհանրություններ: Վիպական կառույցում Խանդութի կերպարը ավելի պատմական, երկրային է թվում, բայց մյուս կողմից՝ վեպում հերոսուհիներից ոչ մեկը այնպես հզոր առասպելաբանական գծերով չի ներկայանում, ինչպես Խանդութը:

13. Գոհարը ևս մինչ ամուսնությունը, անգամ ամուսնությունից հետո էլ հանդես է բերում ռազմի և սիրո կամ Կույս դիցուհիներին բնորոշ հատկանիշներ: Նրա կերպարում ուրվագծվում են արևի աստծո պաշտամունքի հետքերը, որոնք հավանաբար այնքան հին են, որքան Մհեր-Միհրի կերպարում առկա հնագույն պաշտամունքային վերապրուկները:

14. Էպոսում Սասնա կանանց հավասարազոր կերպար է Իսմիլ խաթունը, որը, ի հակադրություն Սառյեի, ոչ միայն Սասնա հերոսների համար դառնում է կին և մայր, այլ նաև դառնում է այն կարևոր հակակշիռ բևեռը, որի շնորհիվ սյուժեն զարգանում է հակադրամիասնական ներդաշնակությամբ:

15. Չմշկիկ Սուլթանը վիպական կառույցում դրսևորում է վրեժխնդիր կնոջ հատկանիշներ: Սակայն կերպարը հանդես է բերում առասպելաբանական շերտեր, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են սիրո, ռազմի, Կույս կամ Մայր դիցուհիներին, և որոնք առնչվում են մեռնող-հառնող աստվածություններին՝ գայթակղություն-մերժում-պատիժ-հարություն առասպելաբանական բանաձևի շրջանակում:

16. Վեպում, կանանց գլխավոր կերպարներից բացի, կան երկրորդական բազմաթիվ կերպարներ, որոնք մեր աշխատանքում բաժանվում են չորս խմբի՝ ա) կերպարներ, որոնց անունները պատումներում տարբեր են, սակայն գործառույթները նույնն են, բ) նույն անունը կրող կին հերոսներ, որոնք տարբեր ճյուղերում են հանդես գալիս և տարբեր գործառույթներով, գ) ասացողի կողմից հիշատակվող կանայք, որոնց որևէ գործառույթ չի վերագրվում, ուղղակի նշվում է, թե յուրաքանչյուրը ում կինն է, դ) կանանց խմբային կերպարներ (աղջիկ ծառաների խումբ, Մսրա պարող աղջիկներ, Մսրա կանայք) և այլն:

17. «Սասնա ծռեր» էպոսում արտացոլվում են տան և հասարակության մեջ հայ կնոջ ունեցած իրավունքներն ու ազատությունները, որոնք անհամեմատ շահեկան են հնում Միջին Արևելքում կնոջ կարգավիճակի մասին եղած պատկերացումների համեմատ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1.«Սասնա ծռերի» կանանց կերպարները և նրանց կովկասյան զուգահեռները, Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Միջազգային չորրորդ գիտաժողով, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 170-177:

2. Հերոսուհի-հերոսականություն կապի դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 5,Երևան, 2018, էջ 476-489:

3.«Սասնա ծռեր» էպոսի՝ Գեղարքունիքի մարզում գրի առնված պատումների առանձնահատկությունների շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2020, էջ 231-240:

4.Արտատեր Պառավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսում, Պատմաբանասիրական հանդես, 2023, N 2, էջ 128-145: Doi: 10.54503/0135-0536-2023.2-128:

5. Պառավի կերպարը «Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2023, էջ 269-287: DOI: 10.56246/18294480-2023.14-20:

6.«Սասնա ծռեր» էպոսի Պառավի կերպարը ծիսական պատկերացումների համատեքստում, «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Գավառ, 2023, էջ 211-229: https://doi.org/10.56246/9789939117652-211
7.Կանանց նվիրագործման ծեսի արտահայտությունը «Սասնա ծռեր» էպոսում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 16, 2024, էջ 310-329: DOI: 10.56246/18294480-2024.16-294:
8.Խանդութի կերպարի առասպելաբանական հիմքերը «Սասնա ծռեր» էպոսում, Պատմաբանասիրական հանդես, 1, Երևան, 2025, էջ 104-126: Doi: 10.54503/0135-0536-2025.1-104:
9. Rivola's "Baragirk' Hayots'. dictionarium Armeno - Latinum" (1621). An analysis of vocabulary related to nations and countries in the first printed Armenian dictionary, 2025,Lexicography. 12 (2): 131-153, Journal of ASIALEX, (co-authors), DOI:10.3138/lexi-2024-0005 (Scopus)
10. Իսմիլի կերպարի առասպելաբանական հիմքերը «Սասնա ծռեր» էպոսում // Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, Հատուկ թողարկում «Աբեղյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան 160-ամյակին, հատոր 5, 2026, N 1 (6), էջ 86-97, https://doi.org/10.46991/BYSU.B/2026.SP1.086:

ALINA AMBIK GHARIBYAN

FEMALE CHARACTERS IN THE EPIC "DAREDEVILS OF SASSOON"

Thesis for PhD degree in Philology,speciality 10.01.05 – ''Folklore''
The defense of the dissertation will be held on 12 June, 2026, at 12:30, at the session of the Specialized Council on Literary Studies of 003 HESC RA in the Institute of Literature after M. Abeghyan NAS RA
(address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15).

SUMMARY

Relevance of the Topic. The relevance of the dissertation topic is due to the fact that although the characters of the epic "Daredevils of Sassoon"have been studied for nearly a century and a half, and female figures have been addressed within this context, a comprehensive and in-depth study of female characters has not yet been undertaken. Modern methodologies across various disciplines make it possible not only to examine female characters within the extensive available material, but also to employ this

analysis in interpreting the main heroes, viewing them through the lens of female figures as embodiments of powerful Mother and Virgin goddesses.

Aim and Objectives of the Study. The aim of the study is to identify the principal characteristics of female characters in the epic "Daredevils of Sassoon"as powerful heroines embodying layers of archaic and heroic conceptions accumulated over millennia, as well as to reveal the role and significance of women in the lives of the heroes of Sassoon—as figures who complement, complete, and inspire them to heroic deeds.

The following objectives are set:

1. to identify the historical and mythological origins of female characters, their similarities and functions in relation to heroes and heroism, stages of development, typological commonalities and distinctions, and ancient layers;
2. to reveal the archaic layers of female characters both in "Daredevils of Sassoon"and in other epics through comparative analysis.

Sources of the Study. The primary sources include ninety-four recorded variants of the epic, collected after Garegin Srvandztyants from various historical and ethnographic regions of Armenia and published in separate volumes, as well as ancient and later epic narratives attested in Armenian literature, including ancient myths, "Vipasank," "The Persian War," "The War of Taron," and epics of other peoples.

Scientific Novelty. The dissertation introduces into scholarly circulation a substantial body of material concerning female characters from ninety-four published variants out of one hundred sixty recorded versions of the epic. A comprehensive and systematic study is conducted in accordance with international standards of epic and mythological research, based on mythological and ethnic features characteristic of Mother goddesses. Through comparative analysis, the study reveals common mythological and ritual archaic substrata inherent in Armenian epic tradition, narrative folklore, and ancient pagan beliefs, as well as typological similarities and national-ethnic characteristics of the heroines.

Methodology of the Study. The research employs historical-comparative, mythological, and structural analysis methods accepted in modern Armenian folklore studies. It also draws upon anthropological and psychoanalytic approaches, as well as the methodology of the neo-mythological trend (the so-called mythological wing of the Cambridge School). Comparative analyses of folklore and ethnographic materials are conducted. The typological examination of epic variants from the perspective of female characters reveals stable patterns of plots and motifs.

Structure and Scope of the Dissertation. The dissertation consists of an introduction, two chapters, conclusions, and a bibliography. The total length is 204 pages.

The introduction presents the relevance, aims and objectives, sources and theoretical framework, scientific novelty, methods, and practical significance.

Chapter One ("Archaic-Mythological Female Characters in the Epic "Daredevils of Sassoon"") discusses definitions of the epic genre by Armenian and foreign scholars, examines the interrelation of hero–heroine–heroism, and analyzes female figures with pronounced mythological layers and deep archaic roots.

Chapter Two ("Wives of the Heroes. Anti-heroines. Other Female Characters") examines female figures with elements of historicity, as well as secondary female characters, including Sarrie.

The conclusions summarize the main findings of the study.

ГАРИБЯН АЛИНА АМБИКОВНА

ЖЕНСКИЕ ОБРАЗЫ В ЭПОСЕ «САСУНСКИЕ УДАЛЬЦЫ»

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук
по специальности 10.01.05 — «Фольклор».
Защита диссертации состоится 12 июня 2026 г. в 12:30 на заседании специализированного советаКВОН РА 003 по литературоведению, действующего в Институте литературы имени М. Абегяна НАН РА
(адрес: г. Ереван, ул. Григора Лусаворича, 15).

РЕЗЮМЕ

Актуальность темы.Актуальность темы диссертации обусловлена тем, что, несмотря на почти полуторавековое изучение образов героев эпоса «Сасунские удальцы», в рамках которого затрагивались и женские персонажи, до настоящего времени исследование женских образов не было проведено в необходимом объеме и глубине. Современная методология различных научных дисциплин позволяет не только рассматривать женские образы в рамках богатого имеющегося материала, но и использовать этот анализ для интерпретации и осмысления образов главных героев, рассматривая их сквозь призму женских персонажей — как носителей функций могущественных богинь-Матери и Девы.

Цель и задачи исследования.Цель исследования заключается в выявлении основных характеристик женских образов героического эпоса «Сасунские удальцы» как могучих героинь, в которых сосредоточены архаические и героические представления, формировавшиеся на протяжении тысячелетий, а также в раскрытии роли и значения женщин в жизни героев Сасуна — как дополняющих, целостно оформляющих и вдохновляющих на подвиги персонажей.В соответствии с поставленной целью сформулированы следующие задачи:

1. выявить исторические и мифологические истоки женских образов, их сходства и функции в связи с героями и героизмом, этапы развития образов, типологические общности и особенности, древнейшие пласты;
2. раскрыть древнейшие пласты женских образов как в эпосе «Сасунские удальцы», так и в других эпосах посредством сравнительного анализа.

Источники исследования.В качестве источников послужили девяносто четыре варианта эпоса, записанные собирателями фольклора после Гарегина Срвандзтянца в различных историко-этнографических регионах Армении и опубликованные в виде отдельных томов и книг, а также древние и новые эпические произведения, засвидетельствованные в армянской письменной традиции: древнейшие мифы, «Випасанк», «Персидская война», «Таронская война», а также эпосы других народов.

Научная новизна диссертации.В научный оборот вводится обширный материал, относящийся к женским образам эпоса «Сасунские удальцы», представленный в девяноста четырех опубликованных вариантах из ста шестидесяти записанных. Проводится всестороннее и систематическое исследование этих образов в соответствии с международными стандартами эпосоведения и мифологии, исходя из мифологических и этнических характеристик, присущих богиням-Матерям. В работе посредством сравнительного анализа выявляются общие мифологические и ритуальные архаические слои, характерные для армянского народного эпоса, эпической фольклорной традиции и древнейших языческих представлений, а также типологические сходства и национально-этнические особенности героинь.

Методология исследования.В работе применены принципы историко-сравнительного, мифологического и структурного анализа, принятые в современной армянской фольклористике. Учтены подходы антропологической и психоаналитической школ, а также методология неомифологического направления (так называемое мифологическое крыло Кембриджской школы). Проведены сопоставительные и сравнительные исследования фольклорного и этнографического материала. Анализ вариантов эпоса по типологическим группам с точки зрения женских образов выявляет устойчивые закономерности сюжетов и мотивов.

Структура и объем диссертации.Диссертация состоит из введения, двух глав, заключения и списка литературы. Общий объем составляет 204 страницы.

Во введении представлены актуальность темы, цель и задачи, источниковая база и теоретическая основа, научная новизна, методы исследования и практическая значимость.

В первой главе («Архаико-мифологические женские образы в эпосе „Сасунские удальцы“») рассматриваются определения жанра эпоса в трудах армянских и зарубежных исследователей, анализируется взаимосвязь категорий

герой–героиня–героизм, а также исследуются женские образы с ярко выраженными мифологическими слоями и глубокими архаическими корнями.

Во второй главе («Жены героев эпоса. Антигероини. Другие женские образы») анализируются женские персонажи с элементами историчности, а также второстепенные женские образы, включая Саррие.

В заключении представлены основные результаты исследования.